

ԹԱՓԱՆՑԻԿ ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

Posted on June 25, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Սիլվա Իսկիկեան Մահրեճեան, Լոս Անճելոս, 25 Յունիս 2022

- Քեզի կ'ըսեմ. սա՛ ասեղը զա՛րկ:

- Առանց փորձ կատարելու, ես penicillin չե՛մ սրսկեր:

- Չե՞ս մը... : Թրքերէն շարան մը հայիոյանք տեղացուց ան, մինչեւ եօթներորդ պորտիս:

Երբեմն կ'ապշիմ եւ հարց կու տամ, թէ նման կանայք որտեղէ՞ն սերած են եւ իրենց ծիները ուրկէ՞ հաւաքած են: Երեւի իրենց ծնած օրը քնքշութիւն եւ նրբութիւն բառերը արձակուող առած էին: Ինչպէ՞ս այդքա՛ն զայրոյթ եւ կոպտութիւն կրնային պարփակել իրենց սրտին մէջ :

Խաթուն՝ ցեղասպանութենէն վերապրողի դուստր ըլլալով, բնագոյաբար կը կրէր արհաւիրքին վերքերն ու ցաւերը ... բարկացկոտ էր ու ջղագրգիռ : Տարագրութեան հետ ալ բերուած հայիոյանքն ու թրքերէնը, իր տան մէջ լոկ վիճակուած հասանելիութիւնն էր: Միակ բանը, որ ուներ, այդ ալ իր անձին վայելող, յաղթանդամ կառուցուածքն էր: Հաւանաբար գաղթականի սաստիկ ջքաւորութիւնն ու դաժան օրերը կոփած էին իր մարմինը՝ հողմերուն դէմ կանգնող կաղնիին նման:

Խաթունը իր պիրկ բազուկներովը թռնուհին շալկած, յայտնուեցաւ տանս շեմին: Ճերմակ , գեղեցիկ, հրեշտակի տեսքով, ջերմահար աղջնակ մը, մեծ մօր ձեռքերուն մէջ մեղկ ու անճար կը տքար ...

-Ընելիքդ ասե՛ղ մըն է. ի՛նչ է «շիշիրմիշ» կ'ընես : Փորձ-մորձ եղեր. սա զա՛րկ, «ճեհեննեմ» ըլլանք երթանք... տասը տեսակ գործ ունիմ ընելիք:

Երկա՛ր յամառելէ, վիճելէ ետք , վերջապէս Խաթունը թոյլատրեց որ, կաթիլով մը փորձ-սրսկում ընեմ, թռնուհիին ձեռքին մաշկին տակ:

Խաթունին աչքերը զայրոյթով փայլատակեցան, երբ ականատես եղաւ՝ կաթիլ մը սրսկման պատճառած, կաս կարմիր ուռեցքին: Սարսափահար եւ կայծակի արագութեամբ ըմբռնեց, իրեն տուած «անպէտք» բացատրութեանս ահաւորութիւնը:

-Ամա՛ , ամա՛, *չօճուխը* (երեխան) պիտի մեռցնէի...

Դռնէն դուրս վազեց, սրսկումը նշանակող բժիշկին մօտ: Ես՝ Խաթունին լաւ ճանչնալով, կը պատկերացնեմ բժիշկին լսելիք «տեղատարափը» եւ անշուշտ եօթը թաղ լեցնող իր կանչ-հայիոյանքը...

Ճակնդեղի գոյնով՝ փրփրած Խաթունը, վերադարձաւ ուրիշ սրսկումով մը: Այս անգամ ի՛նքն էր վստահելի պատասխան պահանջողը. «Արդեօք ենթամաշկային փորձ սրսկում, պէ՞տք է...»

Երեխան անկողինիս վրայ մշիկ-մշիկ կը քնանար...

- Խաթուն . աչքիս լաւ չես երեւար, սուրճ մը պատրաստեմ կը խմե՞ս...

- *Չօճուխը* պիտի մեռցնէի...*Չօճուխը* պիտի մեռցնէի...:

Նոյն իր խօսելաճոճով յօրքերէնին հազիւ միքանի հայերէն բառ խառնելով, հազար օրինանք ու աղօթք կարդաց գլխուս... մինչեւ ապագայ եօթներորդ պորտիս:

- Խաթուն, ինչո՞ւ լաւ հայերէն չես խօսիր:

Գաւաթ մը սուրճով , Խաթունը իր ճակատագրին մրուրը կը բացայայտեր ...

- Աղջի՛կս, մենք դպրոց ըսուած բանը չի տեսանք: Մօրս չեմ յիշեր. հայրս ալ միշտ գինով էր: Փոքր տարիքես, ասոր-անոր տունը մաքրեցի, որպէսզի ինծի եւ քոյրերուս համար հաց ապահովէի: Հայրս՝ իրեն նման անպետքի մը, ինծի հարս տուաւ: Նշանուած էի, օրերով լացի. այս մարդուն չե՛մ ուզեր ըսի: Խօսքդ ո՞վ կը լսեր: Հայրս կրնար զիս ծեծելով «սատկեցնել»... : Մեռնէի չամուսնանայի: Հաց չունէինք ուտելիք, բայց ետեւ-ետեւի «չօճուխ» շարեցինք: Ամուսի՛ն եղեր...: Աշխատի՛ր ու աշխատի՛ր, Խաթուն: Ո՞ր մէկուն հասնիս՝ գործ, տուն, ապրուստ, զաւակներ, թռնիկ... :

Քանի մը կաթիլ՝ այտերէն վար սահող արցունքով , Խաթունն իր դէմքին տգեղութիւնը լուաց...աղի կաթիլներով իր ճակատագրին դառնութիւնը պարզեց...այդ թափանցիկ կաթիլներով իր կոպիտ կենցաղին համար, ներում ապահովեց...

Կը դիտեմ Խաթունին նո՛ր կերպարը՝ իմ անամպ ակնոցով եւ կարեկցանքի հոգիով...

Է՛հ, Խաթուն Խաթուն. եթէ բախտդ ուրիշ ըլլար, հիմա քեզի կ'ըսէին. «Խանո՛ւմ Խաթուն»:

There are no comments yet.